



Համարը ՀՕ-31-Ն
Տիպը Օրենք
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2014.06.18/31(1044) Հոդ.475
Ընդունող մարմինը ՀՀ Ազգային ժողով
Ստորագրող մարմինը ՀՀ Նախագահ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 28.06.2014

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 19.05.2014
Ստորագրման ամսաթիվը 10.06.2014
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2014 թվականի մայիսի 19-ին

«ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-255-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունը «որպես տուժող» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ցանկացած այլ քրեական գործ, եթե դրա փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը երաշխավորելու անհրաժեշտություն» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Հատուկ քննչական ծառայությունում վարվում է հատուկ քննչական ծառայության գործունեության վերաբերյալ վիճակագրություն, որի հիման վրա յուրաքանչյուր կիսամյակ կազմվում են վիճակագրական հաշվետվություններ:

Վիճակագրության վարման համար պարտադիր վիճակագրական դասակարգիչները, վիճակագրական տվյալների (տեղեկությունների) ցանկը և վիճակագրական հաշվետվությունների բովանդակության նկարագրությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:».

3) 6-րդ մասի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով և» բառերը հանել, իսկ նույն մասը «Հանրապետության Նախագահին» բառերից հետո լրացնել «և Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) **հատուկ քննչական ծառայության ծառայող**՝ հատուկ քննչական ծառայության պետը, նրա տեղակալները, հատուկ քննչական ծառայության պետին առընթեր հատկապես կարևոր գործերի ավագ քննիչները, հատուկ քննչական ծառայության վարչությունների պետերը, նրանց տեղակալները, հատկապես կարևոր գործերի ավագ քննիչները և հատկապես կարևոր գործերի քննիչները:».

2) 3-րդ կետի «պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի քննիչները» բառերը փոխարինել «քննչական կոմիտեի ծառայողները» բառերով:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածում՝

- 1) 1-ին կետի «տեղակալ» բառը փոխարինել «տեղակալներ» բառով.
- 2) 2-րդ կետը «պաշտոններ» բառից հետո լրացնել «- հատուկ քննչական ծառայության պետին առընթեր հատկապես կարևոր գործերի ավագ քննիչներ.» և «- վարչության պետեր և նրանց տեղակալներ.» բառերով:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին և 2.2-րդ մասերով.

«2.1. Հատուկ քննչական ծառայության պետին առընթեր հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ և հատուկ քննչական ծառայության վարչության պետ կարող է նշանակվել այն անձը, որը մինչև նշանակումը զբաղեցրել է հատուկ քննչական ծառայության գլխավոր կամ առաջատար խմբերի պաշտոններ կամ ունի դատախազի կամ քննիչի առնվազն 6 տարվա ստաժ:

2.2. Հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալ կարող է նշանակվել այն անձը, որը մինչև նշանակումը զբաղեցրել է հատուկ քննչական ծառայության գլխավոր կամ առաջատար խմբերի պաշտոններ կամ ունի դատախազի կամ քննիչի առնվազն 5 տարվա ստաժ:»:

Հոդված 5. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում`

1) «գլխավոր դատախազի ներկայացմամբ» բառերը փոխարինել «վարչապետի ներկայացմամբ` վեց տարի ժամկետով» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել հատուկ քննչական ծառայության պետի պաշտոնում:

Հատուկ քննչական ծառայության պետի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենքով սահմանված պաշտոնավարման սահմանային տարիքը` անկախ վերանշանակման հանգամանքից, բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի:»:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հատուկ քննչական ծառայության ծառայողի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանափակումները:

2. Հատուկ քննչական ծառայության ծառայողը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հատուկ քննչական ծառայության ծառայողը յուրաքանչյուր պարագայում պարտավոր է դրսևորել քաղաքական գազվածություն և չեզոքություն:»:

Հոդված 7. Օրենքի 13-15-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 13. Հատուկ քննչական ծառայության ծառայողների կոչումները

1. Հատուկ քննչական ծառայության ծառայողներին շնորհվում են հետևյալ կոչումները.

- 1) արդարադատության գեներալ-լեյտենանտ.
- 2) արդարադատության գեներալ-մայոր.
- 3) արդարադատության գնդապետ.
- 4) արդարադատության փոխգնդապետ.
- 5) արդարադատության մայոր.
- 6) արդարադատության կապիտան.
- 7) արդարադատության ավագ լեյտենանտ.
- 8) արդարադատության լեյտենանտ:

2. Արդարադատության գեներալ-լեյտենանտի, արդարադատության գեներալ-մայորի կոչումները բարձրագույն կոչումներ են, որոնք շնորհում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

3. Հատուկ քննչական ծառայության մյուս կոչումները շնորհում է հատուկ քննչական ծառայության պետը:

4. Հատուկ քննչական ծառայության ծառայողներին կոչումները շնորհվում են հերթականության կարգով` նախորդ կոչումում ծառայության սահմանված ժամկետը լրանալուց հետո` տասնհինգ օրվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

5. Հատուկ քննչական ծառայության ծառայողներին կոչումները շնորհվում են անհատական կարգով` ցմահ:

Հոդված 14. Հատուկ քննչական ծառայության պաշտոններին համապատասխանող կոչումները

1. Հատուկ քննչական ծառայության պետի պաշտոնին համապատասխանող կոչումի վերին սահմանն

արդարադատության գեներալ-լեյտենանտի կոչումն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության գեներալ-մայորի:

2. Հատուկ քննչական ծառայության պետի տեղակալի պաշտոնին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության գեներալ-մայորի կոչումն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության գնդապետի:

3. Հատուկ քննչական ծառայության գլխավոր պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության գնդապետի կոչումն է:

4. Հատուկ քննչական ծառայության առաջատար պաշտոններին համապատասխանող կոչումի վերին սահմանն արդարադատության փոխգնդապետի կոչումն է:

5. Այլ պետական մարմիններում ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում (դասային աստիճան, որակավորման դաս) ունեցող անձանց հատուկ քննչական ծառայության պաշտոնի նշանակելիս երեք ամսվա ընթացքում շնորհվում է զինվորական կամ հատուկ կոչմանը (դասային աստիճան, որակավորման դաս) համապատասխան կոչում:

6. Այլ պետական մարմիններում շնորհված զինվորական կամ հատուկ կոչումների (դասային աստիճանների, որակավորման դասերի) համապատասխանությունը սույն օրենքով սահմանված կոչումներին սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 15. Կոչումների շնորհման ժամկետները

1. Արդարադատության լեյտենանտի կոչումը սկզբնական կոչում է և շնորհվում է հատուկ քննչական ծառայության պաշտոնի նշանակվելուց:

2. Սույն օրենքով սահմանված կարգով հերթական կոչումի շնորհման համար սահմանվում են ծառայության հետևյալ ժամկետները.

- 1) արդարադատության լեյտենանտի կոչում ունեցողի համար՝ 2 տարի.
- 2) արդարադատության ավագ լեյտենանտի կոչում ունեցողի համար՝ 3 տարի.
- 3) արդարադատության կապիտանի կոչում ունեցողի համար՝ 3 տարի.
- 4) արդարադատության մայորի կոչում ունեցողի համար՝ 4 տարի.
- 5) արդարադատության փոխգնդապետի կոչում ունեցողի համար՝ 5 տարի:

3. Արդարադատության գնդապետի կոչում ունեցող ծառայողին բարձրագույն կոչում շնորհելու համար ծառայության ժամկետ չի սահմանվում:

4. Նախորդ կոչումը կրելու ժամկետը հաշվարկվում է այդ կոչումը շնորհելու մասին իրավական ակտը ստորագրելու հաջորդ օրվանից:

5. Հատուկ քննչական ծառայության ծառայողի հերթական դասային աստիճանի շնորհումը հետաձգվում է, եթե՝

1) ատեստավորումից հետո նրա նկատմամբ որոշում է ընդունվել ատեստավորումը հետաձգելու և վերապատրաստման գործուղելու մասին.

2) նա ունի կարգապահական տույժ.

3) նրա նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, կամ կատարվում է ծառայողական քննություն:

6. Հերթական կոչումի շնորհումը հետաձգվելու դեպքում հատուկ քննչական ծառայության ծառայողի հերթական կոչումը շնորհվում է սույն հոդվածի 5-րդ մասի 1-3-րդ կետերում նշված խոչընդոտների վերացումից հետո՝ 15-օրյա ժամկետում:»:

Հոդված 8. Օրենքի 16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ և 6-րդ մասերով.

«5. Հատուկ քննչական ծառայության պետին առնթքեր հատկապես կարևոր գործերի ավագ քննիչները ծառայության պետի հանձնարարությամբ իրականացնում են նախաքննություն առանձնակի բարդություն ունեցող գործերով:

6. Հատուկ քննչական ծառայության վարչության պետը ղեկավարում է վարչության աշխատանքները: Հատուկ քննչական ծառայության վարչության պետը կարող է ունենալ տեղակալներ, որոնք փոխարինում են հատուկ քննչական ծառայության վարչության պետին վերջինիս բացակայության ժամանակահատվածում, ինչպես նաև վարչության պետի հանձնարարությամբ ապահովում են նրա լիազորությունների իրականացումը:»:

Հոդված 9. Օրենքի 17-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասը «անկախ է» բառերից հետո լրացնել «և ենթարկվում է միայն օրենքին» բառերով.
- 2) 2-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 10. Օրենքի 20-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.
«6) մեղալով կամ կրճքանշանով պարզևատրում:».
- 2) 5-րդ մասը «պետը» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի»

բառերով.

3) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Եթե արտահերթ շնորհվող կոչումը կամ օրենքով նախատեսված կոչումի վերին սահմանից մեկ աստիճանով ավելի բարձր շնորհվող կոչումը բարձրագույն կոչում է, ապա սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված խրախուսման միջոցները կիրառում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ հատուկ քննչական ծառայության պետի ներկայացմամբ:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ և 8-րդ մասերով.

«7. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված խրախուսման միջոցները հատուկ քննչական ծառայության ծառայողների նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության Նախագահը, եթե կարգապահական տույժը կիրառվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից:

8. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված խրախուսման միջոցները հատուկ քննչական ծառայության պետի նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:»:

Հոդված 11. Օրենքի 21-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Կարգապահական խախտման ծանրությունից ելնելով՝ հատուկ քննչական ծառայության ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

- 1) զգուշացում.
- 2) նկատողություն.
- 3) խիստ նկատողություն.
- 4) կոչումի իջեցում՝ մեկ աստիճանով.
- 5) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.
- 6) ծառայությունից ազատում:».

2) 2-րդ մասը «պետը» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերով:

Հոդված 12. Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Վերապատրաստում և հատուկ ուսուցում անցնելու կարգն ու պայմանները սահմանվում են «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրան համապատասխան ընդունված հատուկ քննչական ծառայության պետի որոշումներով:»:

Հոդված 13. Օրենքի 26-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 26. Հատուկ քննչական ծառայության ծառայողի արձակուրդը

1. Հատուկ քննչական ծառայության ծառայողներն ունեն ամենամյա հերթական վճարովի արձակուրդի իրավունք՝ 30 աշխատանքային օր տևողությամբ, և լրացուցիչ արձակուրդի իրավունք, որի տևողությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 14. Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 15. Օրենքի 31-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ և 4-րդ մասերով.

«3. Հատուկ քննչական ծառայության արդյունավետ գործունեության ապահովման, աշխատակիցների նպատակային խրախուսման, չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեով նախատեսվում է հատուկ քննչական ծառայության պահուստային ֆոնդ՝ տվյալ տարվա պետական բյուջեով հատուկ քննչական ծառայության պահպանման ծախսերի երկու տոկոսի չափով:

4. Պահուստային ֆոնդից հատկացումները կատարվում են հատուկ քննչական ծառայության պետի որոշման հիման վրա:»:

Հոդված 16. Օրենքի 1-ին հոդվածում, 16-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում, 18-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում, 20-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերում և 6-րդ մասում, 21-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում և 3-րդ մասում, 25-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերում, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «դասային աստիճան» բառերն իրենց բոլոր հոլովաձևերով փոխարինել «կոչում» բառով՝ համապատասխան հոլովաձևերով, 34-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունը հանել, իսկ 6-րդ հոդվածի 5-րդ մասը «65 տարեկանը» բառերից հետո լրացնել «, որը Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից կարող է երկարաձգվել մինչև 2 տարի ժամկետով» բառերով:

Հոդված 17. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
Նախագահ**

Ս. Սարգսյան

2014 թ. հունիսի 10
Երևան
ՀՕ-31-Ն